ԶՈՐԻԿ ԾԱՏՈՒՐՅԱՆ

ԷՊՈՍԸ ՈՐՊԵՍ ՈՒՐՈՒՅՆ ԲՆԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԾՆՈՒՆԴ

Յուրաքանչյուր ժողովրդի ցանկացած պատմամշակութային երևույթի ուսումնասիրման համար առաջին հերթին հարկավոր է հասկանալ, թե տվյալ ժողովուրդն ինչ սոցիո-մշակութային և բնական միջավայրում է ապրել, ինչ գործոններ են ազդել տվյալ էթնոսի մշակույթի, հոգեկերտվածքի, մտակեցվածքի և աշխարհընկալման վրա: Հազարամյակներ շարունակ ապրելով հայկական լեռնաշխարհում՝ հայ ժողովուրդը ստեղծել է իր ուրույն մշակույթը և իր տեղն է գրավում համաշխարհային քաղաքակրթության պատմության մեջ:

Հայկական մշակույթում առանձնահատուկ տեղ է գրավում «Սասնա ծռեր» հայ ժողովրդական վեպը, որը ծնունդ է առել Հայկական լեռնաշխարհի մի գողտրիկ անկյունում՝ Սասունում: Սասունը՝ պատմական Մեծ Հայքի Աղձնիք նահանգի տասներորդ գավառն է. տարածվում է Հայկական Տավրոս լեռների վրա: Սասունը լեռնային երկրամաս է, որի տարածքում են գտնվում Սիմ, Սնդոք, Ծովասար, Մարաթուկ լեռնագագաթները: Սասունի լեռներից է սնվում Տիգրիս գետի Բաթմանա վտակը: Սասունը հարուստ է լեռնային գետակներով և հանքային բազմաթիվ աղբյուրներով: Այնտեղ սարերը հարուստ են ալպյան մարգագետիններով, կլիման խստաշունչ է: Սասնա անառիկ լեռների նկարագրությունը գտնում ենք հենց էպոսում, երբ Սանասարն ու Բաղդասարը հեռանալով խալիֆայությունից, երկար թափառելուց հետո ընտրում են իրենց բնակության վայրը.

Ու գնացին, գնացին լեռներ, լեռնե՛ր.
...էդ էրկրին շատ հավնեցան:[1]

Սասուն կամ հին Սանասուն անունը, ըստ ավանդության, ծագել է Ասորեստանի Սենեքերիմ թագավորի որդու՝ Սանասարի անունից, որն իր եղբոր հետ փախչելով հայրենի երկրից և ապաստանելով այստեղ, կառուցել է բերդ, բնակեցրել այս լեռնոտ երկիրը և դարձել նրա հիմնադիր նախնին: Այդ հին ավանդությունը՝ այլ սյուժեներով հարակցված, դարձել է «Սասնա ծռեր» հերոսավեպի առաջին ճյուղի սյուժետային հենքը[2]:

---

[1] Սասունցի Դավիթ. Հայկական հերոսական էպոս, նախաբանը՝ ակադ. Հ. Օրբելու, 2-րդ հրատ., Եր., 1961, էջ 25:
[2] Սասնա Ծռեր. Դ հատ., էջ 7:

«Սասնա ծռեր» էպոսը, լինելով հայ ժողովրդի մշակույթի պատմության գոհարներից մեկը՝ իր ժամանակային առումով խոր հնադարից հասնում է մինչև միջնադար, այն իր մեջ խտացնում է հայ ժողովրդի պատմության տարբեր ժամանակահատվածներ ու մշակութային շերտեր և հաճախ սյուժետային առումով դրանք խառնվում են իրար: Լինելով սերունդների կոլեկտիվ ստեղծագործություն՝ դժվար է որոշել նրա ծագման և ձևավորման ժամանակաշրջանը, ու ինչպես ճիշտ է նկատել Հ. Օրբելին՝ «Ժողովրդական դյուցազնավեպի ճշգրիտ թվականը որոշելու փորձն արդյոք նունքան անիրագործելի չէ՞, որքան այն, որ գետի հոսանքը, ջրի համն ու գույնն ուսումնասիրելով՝ փորձես որոշել, թե ե՞րբ է ծնվել այն առաջին առվակը, որը հզոր գետի վերածվելով՝ իր ալիքներն է տանում դեպի մեծ ծովի աղի ջրեր[1]:

Էպոսի ակունքները հասնում են հազարամյակների խորքը, երբ մարդն ապրում էր դեռևս տոհմատիրական կարգերում, իր գոյությունը պահպանելու համար կռիվ էր տալիս բնության դեմ, զբաղվում էր որսորդությամբ և հավաքչությամբ, ընտելացնում վայրի կենդանիների, պարզունակ գործիքների օգնությամբ հող մշակում՝ ապահովելով կենսական տարրական իր պահանջները, փորձեր անում ըմբռնելու իրեն շրջապատող բնությունը, ամենապարզունակ ձևով փորձում հասկանալ բնության երևույթների փոխառնչությունը՝ դրանց մեկնությունը կապելով գերբնական ուժերի հետ, հավատում բնության ուժերին, նրանց երկրպագում, քանի որ նրանցից էր կախված իր բարօրությունը, քանի որ իր անհաջողություններն ու հաջողությունները կապում էր գերբնական ուժերի հետ: «Սասնա ծռեր» էպոսը հայ ժողովրդի հնագույն տիեզերական պատկերացումների, առասպելների և պատմական իրադարձությունների, ականատեսների և նրանց հետնորդների հիշողություններում դրոշմված պատմական իրադարձությունների միաձուլումն է, որը միասնական ամբողջություն է կազմել և աստառվել է պատմականության արտաքին շերտով:

Պատմական ճակատագրի բերումով միշտ շրջապատված լինելով արտաքին թշնամիներով՝ հայ ժողովուրդը դարերով պայքար է մղել ոչ միայն օտար նվաճողների դեմ, այլ նաև սեփական իշխանների ու հոգևորականների դեմ: Վեպում նկարագրվող պատմական իրադարձությունները տեղի են ունենում արաբական տիրապետության ժամանակ: Նկարագրվում է Սասունցիների պայքարն արաբ նվաճողների դեմ, և որոշ պատմական իրադարձություններն ու

[1] Հ. Օրբելի, .-Սասունցի Դավիթ, 1961, էջ XXVII:

պատմական դեմքերի անունները համընկնում են, սակայն վեպը չի սահմանափակվում միայն 9-10-րդ դարերում տեղի ունեցող սոցիալ-քաղաքական իրադարձությունների արտացոլմամբ: Ու ինչպես նկատում է Մ. Աբեղյանը.՝ «Մեր վեպի էական միջուկը կազմում է 9-րդ դարի Սասունի պատմությունը: Հաջորդ դարերը ազդել են միայն այդ միջուկի կերպարանափոխության վրա, իսկ նախորդ դարերը արաբացոց տիրապետության ժամանակ, համեմատաբար, սակավ նյութ են տվել վեպի համար, չհաշված այն՝ որ այդ միջուկը ևս, ինչպես կարծում ենք գալիս է ավելի հին ժամանակներից և 9-րդ դարի դեպքերի ազդեցության տակ միայն շատ զորեղ կերպարանափոխության է ենթարկված»:[1]

Վեպի հերոսներն ոչ միայն պայքարում են օտար նվաճողների դեմ, այլև օգնում են գյուղացուն առօրյա աշխատանքներում: Վեպի հերոսները օժտված են գերմարդկային ուժով, նրանք հսկաներ են, որոնք միանձնյա կռվում են քառասուն փահլևանի դեմ, մի օրում տասը տնատեղ են փորում, նրանք մեծանում են ոչ թե տարիներով այլ օր օրի, ժամ առ ժամ, երբ դեռ մանուկ են, իրենց հասակակիցների հետ խաղալիս միշտ վնասում են նրանց, սակայն դա գիտակցաբար չեն անում. ուղղակի իրենք նրանցից ֆիզիկապես ուժեղ են: Չնայած ֆիզիկական ուժին՝ նրանք աչքի չեն ընկնում իրենց խորամանկությամբ, նրանց հայ ժողովուրդն օժտել է բարությամբ, միամտությամբ, արդարամտությամբ, առաքինությամբ ու պարզությամբ: Եվ դրա համար էլ նրանց տվել է «Ծուռ» մականունը: Սանասարն ու Բաղդասարը, երբ մարդիկ են բերում իրենց հիմնած քաղաքում բնակեցնելու, Սանասարը եղբորը հարցնում է, թե ում համար առաջինը տուն կառուցեն՝ իրենց, թե գյուղացիների: Բաղդասարը պատասխանում է.

-Առաջ շինենք զէդոնց տներ,
Ու նոր շինենք զմեր բերդ.[2]

Եվ չորս օրվա մեջ կառուցում են գյուղացիների բնակարանները, սրանք էլ հերթով եղբայրներին ապահովում են ուտեստով: Այս հատվածում հպանցիկ ձևով նկարագրվում է հայկական ավանդական բնակարանը, որը գետնափոր է, պատերը քարից, իսկ տանիքը՝ փայտից: Հետաքրքիր է, թե ինչպես են եղբայրները որոշում իրենց հիմնած բերդի անունը. նրանք մի անծանոթ տարեց ռանչպար մարդուց են խորհուրդ հարցնում, և նա, տեսնելով այդ մեծ քարերով պատրաստված պարիսպը, ասում

---

[1] Մ. Աբեղյան, Սասնա ծռեր.- Երկեր, հ. Ա, Եր., 1966, էջ 373:
[2] Սասունցի Դավիթ, 1961, էջ 34:

է, որ անունը դնեն Սասուն, պատճառաբանելով. « Վա, էս ի՞նչ սասուն քարեր են...

Բերդի նկարագրությունը հիշեցնում է կիկլոպյան ամրոց, իսկ ինչպես հայտնի է հնագիտական հետազոտություններից հայկական լեռնաշխարհի տարածքում կիկլոպյան ամրոցները և կառույցները վերաբերում են էնեոլիթից բրոնզի դարին անցնելու ժամանակաշրջանին / Ք. ա. 3 -րդ հազարամյակին/:

Վեպի մյուս հերոսները ևս շինարարական գործունեություն են ծավալում: Միերը, երբ հասունանում է, սկսում է կառուցել բազմաթիվ բերդեր, ամրոցներ, վանքեր: Դավիթը ևս շարունակում է իր հոր շինարարական գործը, նա վերակառուցում է հոր կառուցած Մարութա բարձր Աստվածածին վանքը, այնուհետև Բաթմանա գետի վրա կառուցում է կամուրջ, որը իր անունով կոչվում է Դավթի կամուրջ: Սասունում նաև զարգացած են եղել արհեստները, վեպի տարբեր պատումների հատվածներում հանդիպում ենք արհեստների մասին տեղեկություններ՝ կոշկակարության, դարբնության, ջուլհակության, որմնադրության, պայտարարության և այլն: Այս հատվածում Դավիթը հոր վանքը վերաշինելու համար հորեղբորից պահանջում է արհեստավորներ.

Հինգ հարիր-համար հազար-քար կտրող, քենե կուզեմ.
Հինգ հարիր-համար հազար-քար տաշող, քենե կուզեմ.
Հինգ հարիր-համար հազար-խիճ բերող, քենե կուզեմ.
Հինգ հարիր-համար հազար-ջուր կրող, քենե կուզեմ.
Հինգ հարիր-համար հազար-պատ շարող, քենե կուզեմ.
Հինգ հարիր-համար հազար-սվաղ անող, քենե կուզեմ.
Հինգ հարիր-համար հազար-փայտ փորող, քենե կուզեմ.

Ու Ջենով Հովանը կանչում է Սասունի տարբեր գյուղերից և քաղաքներից արհեստավորներ, որպեսզի վերակառուցեն վանքը:

Ճիշտ է, քաղաքային կյանքին բնորոշ հիմնական զբաղմունքները արհեստագործությունն ու առևտուրն են, և վեպում Սասունը հիշատակվում է որպես քաղաք, սակայն այն ավելի շատ հիշեցնում է միջնադարյան գյուղաքաղաք, որտեղ ապրող մարդկանց զբաղմունքը հիմնականում գյուղատնտեսությունն էր, քանի որ անմատչելի այդ լեռներում հնարավոր չէր տիպիկ քաղաքային կյանքի զարգացումը: Այստեղ հիմնականում զարգացած է եղել առաջին հերթին անասնապահությունը, այնուհետև երկրագործությունը, քանի որ երկրագործության համար բարենպաստ պայմաններ չկային, ինչի հիմնական պատճառը հողի սակավություն էր: Ցորենը ներմուծում էին դաշտի գյուղերից՝ անասնապահությունից ստացված մթերքները փոխանակելով երկրագոր-

---

[1] Սասունցի Դավիթ, 1961, էջ 193:

ծական մթերքներով, շատ ժամանակ ճանապարհների փակվելու, երաշտի պատճառով Սասունցիները հայտնվում էին դժվար վիճակներում: Դրա համար է, որ Սասունցին ամեն մի թիզ հողակտորը փորձում էր լիարժեք օգտագործել: Էպոսի բոլոր պատումներում կարելի է հանդիպել կորեկի արտատեր պառավ կնոջը, որը փոքրիկ արտով հոգում է իր և մինուճար աղջկա ապրուստը: Չնայած այս ամենին՝ զարգացած է եղել երկրագործությունը. հիմնականում մշակում էին ցորեն, գարի, կորեկ, շաղգամ: Վեպում հիշատակվող երկրագործական գործիքներն ու կառույցներն են գութանը, վեցկին, կալը, ջրաղացը, ծիթհանը, որոնք իրենց հերթին վկայում են Սասունում զարգացած երկրագործության մասին: Վեպի տարբեր պատումներում առկա նյութը թույլ է տալիս եզրակացնել, որ Սասունում զարգացած է նաև այգեգործական մշակույթը: Սասունի ծորերում աճում էր խաղող, նուռ, որոնցից պատրաստում էին գինի: Նռան գինին պատվավոր խմիչք է, և Իսմիլ խաթունը յոթ տարվա հնեցված գինով է խաբում Սիերին ու տանում անկողին: Այն էպոսի հերոսների սիրած խմիչքն է.

Տեսավ՝ Դավիթ նստե. Դավթի քեֆն հասեր է.
Սագեր արե խորոված՝ դրե փլավի վերա,
Յոթ տարվա նռան գինին խմե,
Ոտը թալե վեր ոտուն, ազապ լաճերու,
Ազապ աղջիկներու հետ կեր ու խում կ'անի: [1]

Գինին ոչ միայն ուներ կենսական նշանակություն, այլ նաև իր մեջ պարունակում է ծիսական տարրեր, նրա հետ կապվում են մի շարք հավատալիքներ, ու դրա վառ դրսևորումն է Դավթի ու մյուս հերոսների խոսքերը, երբ թշնամու վրա հարձակվելիս միշտ կանչում են. «Հացն ու գինին Տեր կենդանի»:

Ինչպես վերը նշեցինք՝ Սասունցիների հիմնական զբաղմունքի մեջ առաջնային տեղում է անասնապահությունը, քանի որ անասնապահության զարգացման համար կար բոլոր բարենպաստ պայմանները: Վեպի՝ Դավթի ծյուղում որոշ մանրամասնություններ կան, թե ինչպես են Սասունի գյուղերում կազմակերպում անասնապահական աշխատանքները: Պատահական չէ, որ հորեղբայրը Դավթի համար որպես առաջին աշխատանք ընտրեց հովվությունը: Հորեղբայրը նրան դարձնում է սկզբում Սասունի նախրապան, այնուհետև գառնարած: Ճիշտ է սկզբնական շրջանում Դավիթը հաջողություն չի ունենում հովվության մեջ, սակայն հետագայում Մշո դաշտի գյուղերում հովիվ է վարձվում՝ նրանց անասունները սար բարձրացնելու համար, ու բարեխիղճ կատարում է իր պարտականությունները:

---

[1] Սասունցի Դավիթ, 1961, էջ 200:

Վեպի տարբեր պատումների անասնապահությանը վերաբերող սյուժեների տված նյութերից կարելի է պատկերացում կազմել Սասունում տարածված անասնապահության վարման եղանակների մասին: Սասունցիները հոտը հավաքում էին բնակավայրի կենտրոնում և վարձու հովիվը բարձրացնում էր սար, իսկ երեկոյան նորից վերադարձնում բնակավայր, քանի որ Սասունը գտնվելով լեռներում մոտ էր արոտավայրերին: Իսկ Սասունի շրջակայքի դաշտային գյուղերը ամռանը իրենց անասունների հոտերը բարձացնում էին Սասունի լեռնային շրջաններ, այդ երևույթը կոչվում է «սար գնալ», որը ազգագրության մեջ հայտնի է իբրև հեռագնա անասնապահություն:[1] Նրանք դրա համար հաճախ սասունցիներից էին փորձառու հովիվ վարձում, որին վարձատրում էին երկրագործական մթերքներով:

-Դավիթ քո արևուն մեռնիմ
Մենք շատ ենք թյասիբցեր,
Արի ըլի քաղաքի նախրչի,
Աշնան քու հախը առնինք ապրինք:[2]

Անասնապահությանը և երկրագործությանը զուգահեռ Սասունցիների կենցաղում տարածված էր օժանդակ տնտեսական զբաղմունքները, որոնցից վեպում աչքի է ընկնում մեղվապահությունը: Սասունի ալպյան մարգագետինները բարենպաստ պայման էին ստեղծում նաև մեղվապահության համար: Պատահական չէ, որ վեպում շեշտվում է Սասունում մեղրի առատության մասին: Դավթին մանուկ հասակում, երբ կաթից կտրվում է սկսում են կերակրել հայրենիքից ուղարկված մեղրով և կարագով:

Հիմնական և օժանդակ տնտեսական զբաղմունքներին կից, սասունցիները զբաղվում էին յուրացնող տնտեսածևերով՝ որսորդությամբ և հավաքչությամբ, որոնք սակավ տարիներին Սասունցիների համար ունենում էին նաև կենսական նշանակություն: Ի տարբերություն որսորդության, հավաքչության մասին էպոսում տեղեկություններ հատ ու կենտ են հանդիպում՝ վերապրուկների ձևով: Հավաքչության մասին տեղեկանում ենք, երբ Դավիթը Մսրից Բաթմանա Բուղի և Չարբահար Քամու հետ, վերադառնում է Սասուն: Ճանապարհին Բաթմանա Բուղեն ու Չարբահար Քամին դիտավորյալ հաց չեն տալիս Դավթին, և Դավիթը ստիպված հավաքչությամբ է զբաղվում.

Կը քաղեր բանջարներ, կ'ուտեր.
Կընկներ մեջ արտերուն, արմատ կը քաղեր, կ'ուտեր

---

[1] Ю.И. Мкртумян, Формы скотоводства в Восточной Армении, Հայ ազգագրություն և բանահյուսություն, /նյութեր և ուսումնասիրություններ/, պրակ 6, Եր., 1974, էջ 7-93:
[2] Սասունցի Դավիթ., Եր., 1977, էջ 31:

Սարեր որ վեր կ'ը գար, սունկ կը քաղեր, կ'ուտեր.[1]

Վեպի տարբեր պատումների՝ բնության նկարագրություններում հիշատակվում են վայրի բույսերի և արմատների անուններ,

Ժամանակով գարու ն է.
Սար հազար ծաղկունքով, **ավելունով** լեցուն էր:

որոնք ցայժմ կազմում են հայ ժողովրդի ուտեստի համակարգի բաղադրիչ տարրերը: Սասունի լեռները հարուստ են ոչ միայն բուսական աշխարհով այլ նաև որսի տարբեր կենդանիներով, որը բարենպաստ պայման է եղել Սասունում որսորդության զարգացման համար: Որսի կենդանիներից վեպում հիշատակվում են՝ նապաստակ, աղվես, կուզ, կոռաբաշ, արջ, մարալ, գայլ, խոզ, ջեյրան, վերու ոչխար, վերու տավար, առյուծ, բադ, կաքավ, ճնճղուկ, լոր և այլն: Որսորդությունը սասունցիների սիրած զբաղմունքներից մեկն է: Այն ոչ միայն ունեցել է օժանդակ նշանակություն, այլ նաև սակավ տարիներին, շատ գյուղացիների համար երկար ժամանակ ապրուստի միջոց է եղել: Սասունցիներն օգտագործում էին ոչ միայն որսի միս, այլ նաև կաշին և մորթին՝ հագուստ պատրաստելու համար: Էպոսը հարուստ է որսորդության մասին նկարագրություններով: Վեպի չորս ծյուղերի հերոսների սիրած զբաղմունքը որսորդությունն է, որով և ընդգծվում է նախնադարյան ժամանակներից որսորդության դերը սասունցիների կյանքում:

Հերոսները, երբ ընկնում են կարիքի մեջ անմիջապես դիմում են որսորդությանը: Սանասարն ու Բաղդասարը, երբ հեռանում են Բաղդատից, իրենց հանապազօրյա հացը հոգում են որսի միջոցով: Միերն իր հերթին յոթ տարի Սասունը կերակրում է որսի մսով. նա ուներ իր որսասարը, որը պարսպապատում է, մեջը լցնում է որսի տարբեր կենդանիներով: Պատանի Դավիթի սիրած զբաղմունքը ևս որսորդությունն է: Նա կորեկի արտում թռչնորսությամբ զբաղվելիս արտատեր պառավից պատահմամբ է իմանում հոր որսասարի մասին, պառավը նրան հուշում է հոր որսորդական զենքերի մասին, որոնք գտնվում են հորեղբոր մոտ: Իմանալով այդ մասին՝ Դավիթը հորեղբորից պահանջում է տալ իրեն Միերի նետն ու աղեղը և ցույց տալ հոր որսասարը: Նա քանդում է հոր կառուցած պարիսպը որսասարի շուրջ՝ համարելով, որ հայրը մեծ մեղք է գործել, որ կենդանիներին գերության է դատապարտել, ու իր հետ եկած մարդկանցից ոչ մեկին թույլ չի տալիս որս անել մինչև չի քանդում պարիսպները և ազատ արձակում գազաններին: Նա գտնում էր, որ որս պետք է անել ազնիվ և հավասար պայմաններում:

---

[1] Սասունցի Դավիթ, 1961, էջ 155:

Վեպում նկարագրված են մի շարք որսածներ՝ նետ ու աղեղով, բազեով որս, օղապարանով, կենդանիներին ծիով հետապնդելով, հետիոտն, խմբային, անհատական և այլն: «Որսի այնպիսի միջոցներ, ինչպիսիք են օղապարանը, ցանցը և տարբեր ծուղակները, էպոսում նկարագրված են որոշակի հստակությամբ: Չնայած դրանք հակառակորդի կողմից հիմնականում օգտագործվում են հերոսների դեմ մղած պայքարում, սակայն մատենագրական ու ազգագրական վկայությունների համաձայն՝ այդ միջոցները կիրառվել են նաև որսորդության մեջ»:[1] Հետաքրքիր է նաև որսի մսից բաժին հանելու սովորույթը, որը պահպանվել հայոց մեջ մինչև իսկ մեր ժամանակներում:

«Սասնա ծռեր» վեպը հարուստ է նաև հայ ժողովրդին բնորոշ՝ ապրելակերպի, ընտանիքի, ներընտանեկան և հասարակության մեջ փոխհարաբերությունների, կրոնական ընկալումների, ծիսական արարողությունների, հավատալիքների, տոնակատարությունների, մասին տեղեկություններ:

Վեպում հիշտակվում են թագավոր, իշխան, հոգևորական և ռամիկ ժողովուրդ, բայց նրանք բոլորը իրենց նիստ ու կացով, բարքերով և կրթությամբ միմյանցից համարյա չեն զանազանվում: Թագավորի անվան տակ հաճախ հանդես է գալիս մի սովորական գյուղական տանուտեր: Թագավորը և ժողովուրդը մտերմիկ հարաբերությունների մեջ են միմյանց հետ: Սասունցիները սիրում են իրենց տերերին: «Էական տարբերությունն իշխողի և ռամկի միջև այս է, որ մեկը հրամայող է, մյուսը՝ լսող: Իշխանը նստում է բերդում, ռամիկը՝ բերդի մոտ՝ քաղաքում կամ շրջակա գյուղում: Իշխանը կարող է բանեցնել ժողովրդին, եկեղեցի, վանք ու կամուրջ շինելու համար: Նա հարուստ է, երկիրն իրենն է, իր «հայրենին»[2]: «Սասնա ծռեր» էպոսում հանդիպում ենք համաժամանակյա կենցաղավարող ընտանիքի երկու ձևերի՝ անհատական փոքր և նահապետական մեծ ընտանիքների: Նահապետական մեծ ընտանիքը, որը բաղկացած էր ուղիղ գծով և կողմնակի ճյուղերով միջսերնդային արյունակցական կապով կապված ընտանիքն է, որտեղ հաշվվում էր մինչ վաթսունից ութսուն և ավելի մարդ: Դրա վկայությունները գտնում ենք էպոսում: Քեռի Թորոսի ընտանիքը՝ բազմանդամ մեծ ընտանիք էր՝ միայն տղամարդիկ քառասունն էին: Դա նկատում ենք Դավթի հետ ունեցած երկխոսությունից՝ Դավթի այն հարցին թե քանի տղամարդ ենք՝ քեռի Թորոսը պատասխանում է՝.

- Լաո քեզնով քառասուն մարդ ենք:

---

[1] Ա. Պետրոսյան, Որսորդությունը և որսածները «Սասնա ծռեր» էպոսում.- «Պատմա-բանասիրական հանդես», 1988, թիվ 2 /121/, էջ 236:
[2] Մ Աբեղյան, Սասնա ծռեր, էջ 451:

ՀԻՄՆԵՐԻՐ ԳՈՒՏԵՂԵՆ ԳՐԵԼԵՐԸՆ

Նահապետական մեծ գերդաստանների առկայությունը Սասունում կապված էր սոցիալ-քաղաքական հարաբերությունների, և որ ամենակարևորն էր հետամնաց տնտեսական հարաբերությունների, որոնք պահանջում էին մեծ քանակությամբ աշխատուժ: «Միայն գերդաստանական տներն էին, որոնք ապահոված էին աշխատանքի գործիքներով՝ լծկան անասուններով, բավարար թվով աշխատուժով. ահա ինչու մեծ ընտանիքների տնտեսական առավելությունը խաղում էր վճռական դեր երկրագործական և անասնապահական աշխատանքների հաջող կատարման գործում»:[1] Էպոսում իրենց արտացոլումն են գտել նաև ներընտանեկան փոխհարաբերությունները: Նահապետական դարավոր ավանդույթներով առաջնորդվող հայկական գերդաստանում տան գլուխը կանգնած էր նահապետը, վայելում էր ընտանիքի հարգանքը, նա օժտված էր լայն իրավունքներով և իշխանությամբ, տնօրինում էր ընտանիքի անդամների ճակատագիրը: Նա գերդաստանի դեմքն է, նրանից է կախված գերդաստանի հզորությունը: Նահապետը տունը գլխավորում էր մինչև մահ: Նրանից հետո ընտանիքում մեծ հարգանք է վայելում նահապետի կինը, դա արտացոլված է էպոսի կին հերոսների կերպարներում, այստեղ մասնավորեցնենք Դեղձուն Ծամին, որը Սանասարի մահից հետո սկսում է կառավարել Սասունը յոթը տարի միջև Մհերը մեծանում է: Կամ Մսրա Մելիքի մահից հետո, Իսմիլ խաթունը սկսում է կառավարել Մսրը: «Նահապետական դարավոր ավանդույթներով առաջնորդվող ընտանիքում տան հույսը, «կանգուն սյունը», «օջախն ամուր ու հավերժ» պահողը համարվում էր արու զավակը»:[2] Էպոսում ցայտուն կերպով արտացոլված է արու ժառանգի գաղափարը. Մհերը՝ Իսմիլ Խաթունի տանը պատահաբար լսում է թե ինչպես է դաստիարակում Իսմիլ Խաթունը իր որդուն.՝

«Քո մեր քեզի մեռնի , Մելիք,
Մըսրա օջախ կ'անգնեցուցես,
«Հայու օջախ փչացուցես»:

և ինքը զգում է իրեն խաբված, որ մնալով Մըսրում՝ նա Սասնա ծրագը կհանգցնի, այդ մտքից նրա գինովությունը միանգամից թողնում է, և շտապում է Սասուն՝ իր «տան ծրագը» վառելու:

Նահապետական ընտանիքում մեծ տեղ ու դեր ունեն Նահապետի եղբայրները: Սրանք նահապետի մահից հետո կանգնում են տան գլուխ՝ մինչև

---

[1] Ռ. Նահապետյան, Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը, Եր., 2004, էջ 63:
[2] Ռ. Նահապետյան, նշվ. աշխ., էջ 87:

նահապետի զավակներից ավագի հասունանալը: Հայկական ավանդական սովորույթներով տան ժառանգը ավագ որդին է: Հորեղբայրները և քեռիները պարտավորվում են խնամել որբին, զբաղվել նրա դաստիարակությամբ, օգնել խորհուրդներով, մինչև երեխան հասունանա և ինքը ստանձնի հոր տեղը: Երեք տարեկանից հետո երեխան արդեն ազատ դուրս էր գալիս տանից՝ ման գալիս պարտեզներում, խաղում հասակակիցների հետ փողոցում: Հիմնականում խաղում էին ճան, հեծնում ծառեր, հող ու ավազի հետ խաղում, կռիվ անում իրար հետ ու այս ամենը հաճախ տեղի էր ունենում մեծահասակների աչքից հեռու: Տաս-տասնհինգ տարեկան հասակում երեխային փորձում են ուսումի տալ տեղի ծխական դպրոցում քահանայի մոտ, բայց մեծ մասամբ նրանք այնտեղ ոչինչ չէին սովորում: Այնտեղ հիմնականում միայն Սաղմոս կարդալ էին սովորում: Ավելի վաղ հասակում, դեռևս վեց յոթ տարեկանից արդեն, նրանք մասնակցում էին իրենց տան տնտեսական աշխատանքներին՝ կախված տարիքից ու աշխատանքի ձևից: Այդ ժամանակ ևս նրանց կյանքն անցնում էր իր հասակակիցների կողքին դաշտում և սարում՝ բնության գրկում: Այսպիսով երեխան վաղ տարիքից սովորում էր չարքաշ կյանքի, թափառելով լեռներում՝ ենթակա ցրտին ու արևին՝ մանուկ հասակից կյանքի մեջ կոփվելով և բրտանալով:

Էպոսում հանդիպում ենք հայերին բնորոշ ավանդական ամուսնության ձևերի, ինչպես նաև նախնադարից մնացած մի շարք ամուսնական սովորույթների՝ առևանգմամբ ամուսնություն, տեգրամուսնություն:

Հայրատոհմային ընտանիքի սովորույթային նորմերի հետ միաժամանակ վերապրուկների ձևով պահպանվել են մայրատոհմային շրջանին վերաբերող սովորույթների մնացուկներ՝ կապված ընտրության և ամուսնության ծիսակարգի ձևերի հետ: Դրանցից է ամուսնական ծեսերում քեռու դերի կարևորությունը, որը վերապրուկի ձևով մնացել է մայրատոհմային շրջանից: Էպոսում այն արտացոլվել է Քեռի Թորոսի կերպարում. նրա խոսքը կարևոր դեր է խաղում Ծովինարի ամուսնության ժամանակ, կամ Մհերին ամուսնացնելիս նրան են վստահում աղջիկ ընտրելու կարևոր պարտականությունը: Նա նաև բոլոր ճյուղերում հանդես է գալիս հերոսների խորհրդատուի, հովանավորի և դաստիարակի դերում: Հաջորդ վերապրուկը, որ վերաբերում է մայրիշխանական շրջանի վերապրուկներին դա ընտրության ձևերում կնոջ միակողմանի ինքնուրույն ընտրություն կատարելն է: Էպոսի մի շարք ճյուղերում կանայք իրենք են ընտրում իրենց ամուսին՝ Ոսկե ճյուղ Ծամը լսելով Սանասարի հզորության մասին, նրան նամակ է ուղարկում՝ հրավիրելով Սանասարին իր հետ ամուս-

նանալու, կամ Իսմիլ խաթունը Միերին նամակ է ուղարկում, որի հետ իր գլխաշորը և գոտին՝ ի նշան նրա կինը դառնալու ցանկության: Հետաքրքիրն այն է, որ Միերի հետ կենակցելուց ծնված Մըսրա Մելիքը ոչ թե համարվում է Միերի սերունդ այլ Մելքի, այստեղ պարզ է դառնում, որ մի ժամանակ սերունդները հաշվարկել և ժառանգել են մայրական գծով: Այս փաստի օգտի մասին է խոսում նաև այն, որ մի շարք պատումներում Մելիքն ինքն է դրդում կնոջը կենակցել Միերի հետ, որպեսզի ուժեղ սերունդ ունենան:

Քրիստոնեության ազդեցությունը մեծ է եղել էպոսի ձևավորման վրա: Սա պայմանավորվում է հայ ժողովրդի կյանքում եկեղեցու խաղացած հասարակական-քաղաքականան դերով: Էպոսը սկսվում է կրոնական հակամարտությունով՝ քրիստոնեության և կռապաշտության, երբ Հայոց Գագիկ խաչապաշտ թագավորից կռապաշտ խալիֆը կնության է ուզում նրա աղջկան: Վեպում հերոսները հանդես են գալիս իրենց բարեպաշտությամբ նրանք բամաթիվ եկեղեցիներ և վանքեր են կառուցում, դրանցից Մարութա Բարձրիկ Աստվածածին վանքը հերոսների սրբատեղին է: Իրենց ամեն մի նշանավոր գործ կատարում էին Աստծու անունով: «Շարունակ զգացվում է, որ պատմված առասպելների մեջ, վիպասանի կարծիքով Աստվածային կամքն է արտահայտվում և թե մի գերագույն զորություն ներկա է իր կամքով, իշխում և ազդում է դեպքերի վրա»[1]: Վեպում Աստված ուղղակի ձևով չի մասնակցում գործողություններին, սակայն վեպում կան մի քանի քրիստոնեական սրբեր՝ Սուրբ Սարգիսը, Գաբրիել հրեշտակը, որոնք անմիջական մասնակցություն են ունենում վեպի գործողություններին: Հետաքրքիր է, որ վեպում հիշատակվում է քահանաների վարդապետների աբեղաների մասին, սակայն նրանք երկրորդական դեր են խաղում էպոսում: Բացի Մելիքսեթ քահանայից վեպում ոչ մի այլ կրոնավորի անուն չենք հանդիպում, սակայն նրա կերպարի մեջ նկատվում է քողարկված ձևով քրմական տարրեր.՝

Մելիքսեթ քահանան էկավ,
Թոնդրան վերա կնքեց.

Այստեղ պարզ երևում է օջախի՝ կրակի պաշտամունքի հետքեր, որը հատուկ է հեթանոսական շրջանին: Ու միշտ կարծես հերոսները, ժողովուրդը եկեղեցու սպասավորների մասին հիշելիս երգիծանքով և ծաղրանքով են վերաբերում: Սա նաև գրագիտության և կրթության պակասն է, որի պատճառով հասարակ ժողովրդի կողմից խորթ և չհասկացված էին մնում քրիստոնեական

[1] Մ. Աբեղյան,Սասնա ծռեր, էջ 429:

ծեսերը: Դրա համար է, որ հասարակ ժողովրդի մեջ դարերով հազարամյակներով վերապրուկների տեսքով պահպանվել են հեթանոսական շրջանից եկող հավատալիքները, կրոնառասպելական պատկերացումները, սովորույթները և ծեսերը, որոնք էպոսում վարագուրված են քրիստոնեական շերտով: Ու ինչպես նկատում է Մ. Աբեղյանը՝. «Ճիշտ ինչպես եկեղեցին, չկարողանալով հին հեթանոսական աստվածների արարքներն ու հատկությունները ոչնչացնել, դրանք վերագրել է քրիստոնեական սրբերին, և վերջիններիս անվան տակ ապրում և հավատցվում էր հեթանոսությունը, նույն կերպ և մեր վեպի մեջ դիցագունները և նրանց առասպելները քրիստոնեական գույն ու երանգ են ստացել և հարմարեցվել են նոր ժողովրդական գաղափարներին, ուստի և դեռ կենդանի մնում են մեր վեպի մեջ»[1]: Էպոսում հաղիպում ենք այդպիսի հին ժամանակներից մնացած հավատալիքներ՝ ջրի, լույսի, հողի, երկնային լուսատուների, նախնիների և այլնի պաշտամունքներ: Մեծ և Փոքր Միհրները կապվում են հայոց դիցարանի Միհր աստծո հետ: «Միհրի կերպարն երկատված է Մեծ և Փոքր Միհրների միջև: Եվ առավել ցայտուն է արտահայտված Փոքր Միհրի արևային էությունը, որ էպոս մտած Միհր արեգակն է»:[2] Լուսային և արևային հատկանիշներով են օժտված նաև Դեղձուն Ծամը, Խանդութը, Գոհարը: Նրանք նաև օժտված էին գուշակության և կախարդության շնորհքներով: Սանասարը, Բաղդասարը կապվում են հայ առասպելաբանության մեջ ամպրոպային հերոսների հետ, որոնք, կռվելով ջրի ակունքը փակող դևերի հետ, սպանում են նրանց և ազատում արեգակ աղջկան՝ տվյալ դեպքում Դեղձուն Ծամին: Էպոսում հիշատակվում է ժողովրդի կողմից սիրված տոներից մեկը Համբարձման տոնը, չնայած այն քրիստոնեական է, սակայն հեթանոսական ծագում ունի: Այն ջրի և ծաղկի տոնն է: Հավատում են, որ գիշերվա ընթացքում ջրերը մեկ րոպե կանգ են առնում: Այդ գիշեր ջրերը ունեն բուժիչ հատկություն: Տոնին բախտախաղ են խաղում, գուշակություններ անում:

---

[1] Մ. Աբեղյան,«Սասնա ծռեր», էջ 428:

[2] Հայկական «Սասնա ծռեր» էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը: Հողվածների ժողովածու, Գ.Վարդումյան, Կ.Թոխաթյան, Լույսի և արևի պաշտամունքի դրսևորումները «Սասնա Ծռեր» էպոսում, Եր., 2004, էջ 92: